Մրցույթ՝ Գեղարքունիքի մարզի «Տրետուք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի քիմիայի (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթը անցկացվում է երկու փուլով թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլը անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցը անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Նշված փաստաթղթերը ներկայացնել բնօրինակների հետ (պատճենների հետ համեմատելուց հետո բնօրինակները վերադարձվում են):

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 19-ից մինչև նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. նոյեմբերի 4-ին՝ ժամը 13:00-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Տրետուք գյուղի միջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք, գյուղ Տրետուք, 1-ին փ., տ. 6: Տեղեկությունների համար զանգահարել 093 81 24 66 հեռախոսահամարով:

Տրետուք գյուղի միջնակարգ դպրոցի տնօրինություն